





## ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### ԿՈՒԳԱՆ

Մ. Մ. Թէթրո, և զօրմէն Պօտի, որոնք արցապարտով ֆրանսա զա-  
րած էին, Պէյրուսի վերադարձան։  
Մ. Բոնսոնի չվերադարձը ճշտորոշ-  
ուած է։

### ԿԱՅՈՂԻԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Հայ Կայսրիկէ նորմալի կա-  
թոլիկոս-Պատրիարքը այցելեց Մա-  
րտի Պատրիարքին և Հայոց կաթո-  
լիկոսներուն։ Երկու ժողովուրդը  
կաթոլիկոսները առաջին տեսու-  
թեան հարմարութեան։

### ՆԵՐՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՀԻՒԱՆԴ

Ներքին նախարարը Մ. Մ. Նա-  
մուր, որ պատուաւորուած էր թի-  
ֆօտի դէմ, տակաւին ապաքինած  
է։

### ՆԱՄԱԿԱՆ ԱՅԴ

Նամակատան վարչութիւնը կը  
յայտարարէ թէ Բ. Գոմիսարուսեան  
որոշմամբ կ'արտօնուի առեւտրա-  
կաններուն որ իրենց յայտարարու-  
թիւնը կ'ախելն Նամակատան գը-  
րասենականներուն մէջ։

Պայմաններն ու սակագիրները  
հասկնալ ուղղակի վարչութիւնէն։

### ԶԻԱՐՇԱԿԻ ԴԱՇԵՆՆԻ ՎՐԱՅ

Երիտասարդ մը որուն տոմսակը  
չհասած էր, կը մօտենայ վճարումնե-  
րու կիշին և կ'ուզէ գումար, երբ մի  
թիւ սպասում կըլլայ, անվայել վե-  
րաբերում կունենայ, որուն կը մի-  
շտմանն ուստիկաները և երիտասարդը  
կը ծնեն նուազումս աստիճանի մի-  
ջովորական բուն յուզում մը կը  
բարձրանայ աստիճաններուն դէմ, և  
միջ կը մընայ խուճապ մը ստեղծուի։

### ԱՇԽԱՏԱՌԱՐԿԱՆ ՇԱՐՔՈՒՄ

Ինչպէս Պէյրուսի մէջ, նոյն-  
պէս Դամասկոսի մէջ գումարուած  
է աշխատաւորական ընդհանուր ժո-  
ղով, իրենց պատգամաւոր ընտրե-  
լու համար յաւաքիկայ նոյն 8-15  
Բարիկի մէջ գումարուելիք աշխա-  
տաւորական միջազգային բոնկերին։

### ՍԻՐԻՈՅ ՊԻՏՏՔԷՆ

Սիրիոյ կառավարութիւնը վեր-  
ջացուց իր պիտանքի կարգադրու-  
թիւնը, որուն մէջ 2 միլիոն Մ. ոս-  
կի խնայողութիւն մը կըրցած է  
մայնել, եւրոպականներով և մուս-  
թին հաւասարակշիւելով։

### ԵՆԶԻՏԻ ԵՆԻՇ ՍՊԱՆՈՒՄԸ

Բերու Տաղըի Ենչիւններու պե-  
տը Տէրիւր աղա Ենչիւն Ենչիւն  
Արշակար գիւղը կ'երթար, ընկերակ-  
ցութեամբ իրեն գիւղացի Ապտալան  
պին Հասան Գալանի, ճամբան երկ-  
րորդին կողմէ վեցհարուածի չորս  
գնդակներով զիւնէ վիրաւորուեցաւ  
և մեռաւ։ Ենչիւնը ստով չի բա-  
հականաւարով, քարերով և ջրախա-  
խնց մեռնալին զանկն ու ոսկորները,  
կորսնցնելու համար սպաննուի  
հետքը։ Սպանին ոսկորները գործը  
ծնորդակցեցին զայն, որ խոստովա-  
նեցաւ իր քսանիւր արարքը յայ-  
նելով թէ ինչ ընդհ. պատերազմի  
Յունաստան գերի իյնալով, մի քա-  
նի ամիս առաջ գերութենէն վերա-  
դարձին տեսած է թէ իրենց չէյաւը  
ամուսնացած է իր կնոջ ու աղջկան  
հետ, որով առ ի վրէժխնդրութիւն  
առանց կնիկի մնալուն սպանած է  
զայն։

## Ա Ձ Դ

Որբանոցէս եւած կարգ մը նախ-  
կին սան ու սանուհիներու, ինչպէս  
նաեւ ժամանակին Որբանոցին մէջ  
գտնուած անձերու Նամակները կը  
շարունակեն գալ նստատուութեան  
հասցեով։ Որոնցմէ կը խնդրուի ի-  
րենց հասցեն փոխել մինչև յառա-  
ջիկայ 15 Նոյեմբեր 1931։ Թիւեալ  
Թուականէն յետոյ Բէյրութէն-Սի-  
ուան Որբանոցին հասցեով եկող նը-  
ման Նամակները ետ պիտի վերադա-  
ռուին։  
ՏԻՍՉՈՒԹԻՒՆ

### Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

Բէյրութէն-ՍԻՍՏՈՒԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ  
3-4 (Կնիք)

### ԿԸ ՓՆՏՈՒՈՒԿ

Գրիգոր Կէօքճեան, բնիկ Բե-  
սապի, առկէ երեք տարի առաջ  
Պրազի-Սանթոս կը գտնուէր։ Լուր  
ունեցողները թող իմացնեն հետեւ-  
եալ հասցէին։

Hanna Yaralian B. P. 503  
Beyrouth

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

### ԿԻՊՐՈՍԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԿԻՊՐՈՍԻ ՄԵՋ ՈՅ ՄԵԿ ԳՐԳՈՒԹԻՒՆ ԶԱՅԵՐՈՒՆ ԿԵՄ։ Հայ  
Առաջնորդական փախածորը պայմանուած է։ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ  
ՉԵՆ ՀՐԿԻՉՄԸ։ Հայոց առաջնորդը ողջ ողջ պիտի այրենք չենք  
ՄԵԼԻՔՈՆԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՎՐԱՅ ՈՅ ՄԵԿ ՅԱՐԶԱԿՈՒՄ Ե-  
ՂԱՄ Է։ Ոչ մէկ հայ սպանուած։

Բոլորը սուտ ու չինձու են, մեր հարեւանին կողմէ յերկրուած քա-  
նի մը թերթ աւելի ծախելու քաւ բարի սովորութեան։

— Կիպրոսի հայոց առաջնորդ Սարաճեան Եփեսոս, որ ժամանակէ  
մը ի վեր Պէյրութ կը գտնուի, «Ազգային» այս չինձու լուրերուն վրայ այ-  
ցելեց տեղւոյս անգլ. հիւպատոսարանը։ Ճշտուեւ համար նման տարածայ  
նութիւններու իրականութիւնը։

Կիպրոսէն նոր ժամանած Մ. Պէյրութն յայտարարեց որ հայերուն  
դէմ բան մը չկայ։ Ո՛չ մէկ հայկական հաստատութիւն հեղիգուած է։  
Ո՛չ մէկ հայ սպանուած։ Սխալ է այդքան մտահոգուիլ, ըսաւ Մ. Պէյր-  
ութն. քանի որ անգլիական ռազմերը զրուսեան տէրն են։

Նիկոսիա, 30.— Կիպրոսի պաշտպանութեան գործին մէջ իշխանու-  
թեան իրաւասութիւնները զօրացնող նոր օրէնքներ հրատարակուեցան «Կա-  
ղէթի» մասնաւոր մէկ թիւին մէջ, որ լոյս տեսաւ ընդհանուր կառավարի-  
չին հսկողութեան ներքեւ։ Ներկայիս կղզին ամէն կողմէ հանդարտութիւն  
կը տրիւ։ Զինուորները պահակ կը շրջին Ֆամակուսթայի փողոցներուն մէջ  
և օդանաւերն ալ օդանաւային ցոյցեր կը կատարեն։

### ՔՈՒՐԲՈ-ՊԱՐՍԻԿ ԿԱՄԱՃԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Աղբը Տաղի դէպքերուն և զանոնք կանխող պարագաներու  
առթիւ, բանակցութիւններ կը կատարուին Քուրբուպարի կառա-  
վարութեան միջեւ։ Սահմանադրուի ձեզման և սահմանափակման  
համար։ «Միլիթը»ի ստացած մասնաւոր տեղեկութեան համաձայն,  
Քուրբանի քուրբ մեծ գետակը ինտերմիտայի կառավա-  
րութեան միջեւ կատարուող այս բանակցութիւնները համաձայնու-  
թեամբ վերջացած են և քաղաքը պատրաստուած է։

### ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնտոն, 30.— Պահպանողականները շահեցան 471 աթոռ։ Ազգայնա-  
կան ազատականները՝ 63։ Աշխատաւորական ազգայնականներ՝ 14։ Սղապ-  
նական անկախները՝ 30։ Որով, կառավարութիւնը կը շահի համագումար  
551 աթոռ։ Ընդհանուր կողմէ շահեցաւ Դիւան 57 աթոռ։

Ընտրութեանց այս արդիւնքով պահպանողականները կը շահին 207  
աթոռ, մինչ աշխատաւորականները կը կորսնցունեն 232 աթոռ։

Ընտրութեանց մասնակցեցին 30 միլիոն ժողովուրդ։ Ինչ կուսակ-  
ցութիւնները պաշար մղեցին։ Ութ պահպանողական կիներ ընտրուեցան։

— Մ. Մաքսուելը երկրին ուղեւոր կողմէ մը կ'ըսէ։

— Աննախնայ մեծամասնութիւնը, որ մեզի շնորհուրեցաւ երեկ,  
պէտք է ամբողջ աշխարհին համարէ որ անգլիա կրնայ միշտ յենուի բարի  
կամեցողութիւն ունեցող բոլոր մարդոց վրայ, երբ աշխատութեան պէտք  
ունենայ»։

### ԱՆԳԼԻԱԿԱՆ ՂԱԽԻՆԻՆ ԳՈՒՄԱՐՈՒՄ

Լոնտոն, 27.— Մ. Մաքսուելը նախարարներէն խնդրեց որ  
հիգաբքի առաւ Լոնտոն գտնուին, որպէսզի կարելի ըլլայ դանի-  
նի ճիշտ գումարել կէս օրէն յետոյ, կարեւոր խնդիրներով, մասնա-  
ւորաբար արտաքին գործերով ու գահաճառին խմբագրութեամբ  
զբաղելու համար։

Նոր խորհրդարանին անդամներ Նոյեմբեր 11ին պիտի գու-  
մարուին, նախագահ ընտրելու համար։ Եւրոպական միացեալ մասին  
մէջ, նոր երեսփոխանները պիտի կատարեն իրենց երգումը։

### ԻՆՉ ԿՐ ՆԱՈՒ ՄՈՒՍՈՒՆԻ

Մ. Մուսոյի ժողովրդական մեծ գանգուածի մը առջեւ ըսաւ։

— «Կարգ մը ճեմեսական եւ ֆալսեական խաղաղութիւն» Եւրո-  
պայի տնտեսական ճգնաժամը անհաշիւ խաղաղութեան պահանջ։  
Աւետարն գիտէ թէ իրենք աշխատանք ազգ մը եւ զօրաւոր կառա-  
վարութիւն մը կը ներկայացնէ։ Եթէ խաղաղութեան խաղաղութեան իսկ,  
իսպախ գիմադրելու հարկ եղած բոլոր ուժերը ունին»։

### Մ. ՀՈՒՎՐ-ԼԱՎԱՅ ԿԱՄԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Բարիք, 26.— Մամուլը ընդհանուր կերպով ողջունեց Ուաշինգ-  
թոնի գեղարքը, որ վերջ կուսար Հուվր-Լավալ տնտեսականին։

— Ընդհանուր տնտեսական վարդապետութիւնը եւ ձեռք բերուած  
արդիւնքները գնահատելի են։ Ցաւաւ կը պահէ անընդհանրաբար  
ութիւնը եւսկի ծրագրին։

### Մ. ԼԱՎԱՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՋ

Ուաշինգթոն, 26.— Մ. Լավալ Ցաւաւ մեկնել առաջ, հրա-  
ժեցի պատգամ մը ուղղեց ամերիկեան ժողովուրդին, ըսելով. «Մ.  
Հուվր-Լավալ հետ մեր ունեցած տնտեսականութիւնները պիտի վերանորոգեն  
ճշմարտ-ամերիկեան բարեկամական կապերը եւ անոր արդիւնքը  
սահմանէ պիտի ըլլայ բոլոր աշխարհի համար»։

Ուաշինգթոն, 25 Նախագահ Հուվր եւ Մ. Լավալ համաձայ-  
նութեամբ մը յանգեցան որ ամերիկեան եւ ճշմարտական պայմանե-  
րը իրարու գործակցին համաբարհային տնտեսական մեղմելու հա-  
մար։ Բայց ամէն բանի մանրամասնութիւնները ձեռնարկ չեն դրաւ։

### ԶԻՆՈ-ՌՈՒՍ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւրպայ, 30.— Զինաստանի ազգային կառավարութիւնը մերժեց  
Սովիէթ Ռուսիոյ կառավարութիւնը ճանչնալու մասին եղած առաջարկները։  
Մարեշալ Եւան-Բէյ-Շէյք յայտարարեց թէ նախ քան Սովիէթ Ռուսիոյ ճա-  
նաչումը, անհրաժեշտ է որ Մոսկուայի կառավարութիւնը երաշխաւորու-  
թիւն տայ թէ պիտի զգուշանայ Զինաստանի մէջ քաղաքացիական  
մղկել և չինական քաղաքացիներուն դրամաժ օգնելէ։

## Զ Ա Ն Ա Ձ Ա Ն

### ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐԺԸ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Երուսաղէմի Պատր. Տեղապահ Մեթուայ Եպս. Նեանեան կը  
նեղագրէ թէ Անգլիոյ քաղաքը հաստատուած է Երուսաղէմի նոյ-  
նիսր Պատրիարքի Թագաւ Եպս. ընտրութիւնը։

### ՆՈՐ ՊԱՆԴԱՆԵՐ ԿՐ ԳՈՑԻՒՆ

Ամերիկայի զանազան մասերուն  
մէջ հաստատուած տասնմէկ նոր  
պանքներ 12 միլիոն աւանդ դրամ-  
ներով իրենց գումարները գործեցին։

2,800 000 ԲԱՆԻՈՐՆԵՐ Խ. ՍԻՈՒ-

### ԲԵԱՆ ՄԵՋ

Պաշտօնական հաղորդագրու-  
թեան մը համաձայն, ընթացիկ տար-  
ւան մէջ Խ. Սիւրբեան տնտեսու-  
թեան համար 2,800,000 նոր բա-  
ւորներ կ'աշխատին։ Անոնցմէ գրե-  
թէ մէկ միլիոնը կինն են։ Անցեալ  
տարուան թաղաքամաս օրավար-  
ները միջին հաշուով հարկւրին 12 ա-  
ւելցած են։

### ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ԲՈՒՌՆ ԾՈՑԵՐ

Հիւսիսային Իտալիոյ մարմարի-  
նի նշանաւոր կղզիները կարարաւ  
մէջ 4000 բանւորներ քաղաքին կեդ-  
րոնը հաւաքուելով բողոքի մեծ  
ցոյց մը կազմակերպեցին օրավար-  
ներու նախագահին դէմ բողոքելով  
կ'աղաղակէին «անկերի ֆաշիզմը»,  
«անկերի Մուսոլինի»։ Հանրային շէն-  
քերու մէջ ճառեր արտասանուեցան  
ֆաշիստ վարչաձեւին դէմ։ Կարա-  
րայի ամբողջ քաղաքական զինու-  
որութիւնը ըմբոստ բանւորներու դէմ  
բարձրանալով մէջ դրուեցաւ, նոյն իսկ  
հարկ եղաւ մօտակայ քաղաքներէն  
օգնական զօրք ուղարկել, որոնք ահա-  
պարհեցին զայն բանակաւորներով։  
Գնդացիները ճարտարներէն և բաւա-  
կան թուով բանւորներ վիրաւորուե-  
ցան ծանրապէս։ Հարկաւորները  
բախտաբարութիւններ եղան։ ամբողջ  
քաղաքը զինուորական շղթայի տակ  
առնուեցաւ։

ՄԵՆԵԼՆԵՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ԿԱՌՆԵՆ

Վիեննայէն 23 հոկ. թուականով  
կը հեռագրեն։ Վիեննայի առեւտրա-  
կան հանգուցեալ Վասիլ Շիլլերի  
թաղումը պիտի կատարուէր անցեալ  
չորեքշաբթի օր, երբ յանկարծ եկե-  
ղեցական արտոգրութիւնները խան-  
գորութեան տարօրինակ պատահա-  
րով մը։ Մեռեալ, վերջուց զապա-  
ղին կափարիչը և զուլը վեր բար-  
ձրացուց։ Ներկայից սարսափով  
լեցուցեցան ի տես այս դէպքին։

\* \* \* Իգմիրի Էլիէֆ փաշա թաղը  
բնակող «Թերիլի» շտան էֆ.ին  
11 տարեկան ծափէր անուն տղան  
ուղեղատապէ ընտելած և մեռած  
էր։ Տունին մէջ ողբուկով սկսած և  
յուզարկաւորութեան պատրաստու-  
թիւնները տեսնուած էին։ Լուացու-  
մը կատարուած միջոցին աչքերը  
բացած և ելած նստած է։

### ԻՐԱՆՏԱ ՀԱՄԱՅՆԱՎԱՐԱԿԱՆ

### ՎՏԱՌԳԻՆ ԴԵՄ

Իրանտայի Ներքին գործերի  
մը ժողովուրդը որու համաձայն զին-  
ուորական դատարան մը կը ստեղ-  
ծուի երկրին մէջ որ պաշտօն ունի  
կարճ ժամաւորութիւններով դա-  
տելու և պատմելու անաբեկական  
և համայնավար փոքրականութիւն  
զինակները օրոնք այս միջոցին մեծ  
գործունէութիւն ցոյց կուտան ամ-  
բողջ երկրին մէջ։

### ԷՆԿԻՐԻՆ ՍԻՐՈՂՆԵՐ

Էնկերի մէջ հոսանք մը կայ  
նոր ընկերութիւն մը կազմելու հա-  
մար։ Ընկերութեան անունը պիտի  
ըլլայ «Էնկերի Սիրոյն» և Էնկե-  
րութիւնը։

### ԱՐՏԱՍՈՒՄԱՆ ՄԻ ԵՐԹԱՐԱ

Այս է նշանաւոր անգլիական  
մամուլին որ բուն պայքար սկսած  
է արտասահման օդափոխութեան  
կամ պտոյտի գաղութներու դէմ։

Անգլիական թերթերը որոշած  
են ոչ մէկ ծանուցում չընել օտար  
երկիրներու պահպաններուն և գրո-  
սավարներուն։ Թերթերը չեն օգր-  
քալուել որ անգլիացի ժողովուր-  
դը Զուլիբերիա, Իտալիա և այլ եր-  
կիրներ ենթադր անգլիական ոսկին  
ծախսելու։ Երբ երկրորդ կը գտնուի  
տնտեսական ծանր տագնապի մէջ։

### ԲԱՆԻՈՐԻ ԴԱՐՄԱՆՈՒՄԸ

Վիեննայի մէջ բաժն. Թրոֆ. տ  
տարեկան 10 000 տոյար։ Կատանայ  
քանակի դէմ իր գիտական փորձե-  
րը շարունակելու համար։ Թրոֆ. տ  
գիտունը բժիշկը այս օրերս յայտա-  
բարած է որ դարմանումի նոր եղա-  
նակ մը գտած է այս մահացու հի-  
ւանդութեան դէմ։ Այս դարմանու-  
մը կը կայանայ հիւսնող գրկի կեն-  
դանական ամէն կարգի ճարպային  
սնունդներէ։ Ինչպէս իսկ կարագ և  
կաթ գործածելէ։

Հիւանդը ձիթաւորով պատրաս-  
տուած կերակուրներ միայն պիտի  
ուտէ։

Վիեննայի Բաղադայնութիւն  
նր բժիշկին արամագրութեան տակը  
ընդարձակ շէնք մը պիտի դնէ իր-  
բեւ դարմանատուն քանակի հի-  
ւանդութեան։

### ԹՇՈՒՄԱՌԻԹԻՒՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ

### ՄԵՋ

Ամերիկայի Ուիլիսոն քա-  
ղաքի մէջ մայր մը մասնուած ծա-  
րայեղ թշուառութեան և Կանկերոզ  
աղիւս հաց ապահովելու իր քաղցած  
չորս զաւակներուն, ահաւոր յու-  
սահատութեան մէջ կ'սպաննէ զա-  
նոց իր ձեռքով և ի վերջոյ անձ-  
նասպան կ'ըլլայ։

### Մ. ԲԵՄԱՆ ՈՐԳԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՐ

### ՀԱՐՏԵՆ ԵՐՈՒՍԱՂԱՐՔԻՆ

Թուրքիոյ Հանրապետութեան  
նախագահի Ա. ընդհ. քաղաքացի  
Յունաց Պատրիարքարան այցելելով  
Մ. Պատրիարք Հօր որպիսութիւնը  
հարցուցած է և հաղորդած Կազի  
Պաշաֆա Բէմալ փաշայի ողջոյն-  
ները։

Լօզանի զաւնագրին ստորագր-  
ուելէն ի վեր առաջին անգամն է որ  
թուրք կառավարութեան պետը չոր-  
ման մէջ կը մտնէ Պատրիարքարանի  
հետ։

Թերթերը թուրքերէնէն մեր-  
ձեցման նոր մէկ պտուղը կը նկա-  
տեն այս պարագան։

### ՊՈՒԿԱՐԱՆ ԲԱՆՏԵՐՈՒՆ ՄԵՋ

Սօֆիայի կեդր. բանտին կառա-  
նաւորներէն 600 հոգի քանի մը օրէ  
ի վեր կը մերժեն ճաշել,

